ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՏՈՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գլոբալացումը որպես արդիականացման մարտահրավեր

Տնտեսական և քաղաքական գլոբալացման ներկա դարաշրջանի գլխավոր իրողություններից մեկը ազգային տնտեսական համակարգերի գործունեության մասշտաբների ընդլայնումն է և ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը: Այս հանգամանքը մի կողմից՝ զարգացման հավելյալ հնարավորություններ է ստեղծում, մյուս կողմից՝ պարունակում է լուրջ սպառնալիքներ, քանզի ստիպում է ներքաշվել շատ ավելի ինտենսիվ ու վտանգահարույց մրցակցային հարաբերությունների տիրույթ: Իր չափերով աննախադեպ վերջին համաշխարհային ճգնաժամը այլևայլ դասերի հետ մեկտեղ փաստում է, որ ֆինանսատնտեսական ցնցումների դեպքում հատկապես խոցելի են դառնում տեխնոլոգիապես թույլ, անմրցունակ ու ներմուծումից մեծապես կախված երկրները:

Ճգնաժամի պայմաններում, ըստ էության, ակնհայտ է դառնում այն իրողությունը, որ ջնջվում կամ ավելի ստույգ՝ խիստ հարաբերական են դառնում ,ներքին շուկաե և ,արտաքին շուկաե հասկացությունների միջև սահմանները: Ազգային ընկերությունների մի մասը վեր է ածվում մեծ ծավալով գործող ընկերությունների ստորաբաժանումների կամ ստիպված է լինում գործունեություն իրականացնել բացառապես արտաքին շուկաներում, կամ, եթե նույնիսկ գործում է գլխավորապես ներքին շուկայում, այդուհանդերձ, հարկադրված մրցակցում է համանման օտարերկրյա ընկերությունների հետ:

Մրցակցությունն, այդպիսով, գերաճում է՝ անցնելով ազգային սահմանները և դառնում համընդգրկուն երևույթ, ու, այս տեսակետից, արդյունավետության և առավելագույն շահույթ ստանալու խնդիր լուծող որևէ ընկերության համար հնարավոր մրցակիցների ռազմավարությունների ու վարքագծի հետ հաշվի նստելը դառնում է հաջողության հասնելու հիմնապայմաններից ու որոշիչ գործոններից մեկը: Այս պարագայում կարող է հաջողություն ունենալ ու մրցակցության մեջ շահել այն ընկերությունը և, ամբողջությամբ վերցրած, ազգային տնտեսությունը, որը հաշվի է առնում տնտեսաքաղաքական խաղի ձևավորված նոր կանոնները և, իհարկե, այդօրինակ մրցակցության մեջ հանդես է գալիս որպես հավասարազոր մրցակից՝ առաջին հերթին իր բարձրակարգ տեխնոլոգիաներով ու դրանց հիման վրա թողարկվող բարձրտեխնոլոգիական ու գիտատար, ասել է թե՝ ավելացված արժեքի մեծ բաղադրիչ պարունակող ապրանքների և ծառայությունների արտադրող ու վաճառող:

Ակնհայտ է, որ համաշխարհային տնտեսության մեջ գործող կանոնները վաղուց արդեն ինստիտուցիոնալացված են, մասնավորապես՝ բազմաթիվ միջազգային տնտեսական ու քաղաքական կառույցների կողմից մշակված ու գործողության մեջ դրված համաձայնագրերի, պայմանագրերի, կանոնակարգերի, հռչակագրերի կամ այլ փաստաթղթերի տեսքով: Օրինակ՝ այնպիսի ազդեցիկ միջազգային կառույց, ինչպիսին Առևտրի համաշխարհային կազմակերպությունն է (ԱՀԿ), մշակել ու անդամ երկրների փոխհամաձայնության միջոցով գործողության մեջ է դրել մի քանի տասնյակ համաձայնագրեր ու դրանց օժանդակ հավելվածներ, որոնք կառուցվածքավորում և, ըստ էության, ուղղորդում են համաշխարհային տնտեսության զարգացումները, այդ համատեքստում նաև ձևավորում և սրբագրում առանձին ազգային տնտեսությունների, դրանց խմբերի կամ առանձին ընկերությունների մրցակցային վարքագիծը:

Ստեղծված նոր ինստիտուցիոնալ իրողությունները լուրջ մարտահրավերներ են ոչ միայն առանձին ընկերությունների սեփականատերերին ու կառավարիչներին, այլև տնտեսական քաղաքականության մշակման ու իրականացման պատասխանատուներին՝ երկրների կառավարություններին, կենտրոնական բանկերին, կարգավորման տարբեր գործառույթներ ստանձնած այլ պետական մարմիններին: Այժմ արդեն բավարար չէ վարել կարգավորման պարզունակ գործառույթներ ենթադրող մակրոտնտեսական քաղաքականություն, որի նպատակը տնտեսության արդյունավետություն ապահովելն է՝ տնտեսական գործունեության ու մրցակցության համար բարենպաստ պայմաններ ստեղծելով, մենաշնորհային գործունեությունը սահմանափակելով և առկա ոչ անսպառ ռեսուրսների հնարավորինս օպտիմալ տեղաբաշխմանն օժանդակելով, նպատակամղված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն իրականացնելով և այլն:

Նշված իրողությունները հարկադրում են վերանայել մակրոտնտեսագիտության ընդունված հանձնարարականների վրա հիմնված տնտեսական քաղաքականության մոտեցումներն ու դիտարկել առկա խնդիրները, ինչպես նաև դրանց հավանական լուծումները փնտրել ժամանակային ու տարածական ընդգրկման ավելի լայն տիրույթում: Արդիականացման խնդիրը շատ ավելի բարդ է այնպիսի տնտեսական համակարգերում, որոնք գտնվում են համակարգային կերպափոխման (տրանսֆորմացիայի) փուլում:

ԽՍՀՄ նախկին երկրները, որոնց թվում է նաև Հայաստանի Հանրապետությունը, վերջին տասնամյակների ընթացքում բախվում են նման լուրջ մարտահրավերների, որոնք շարունակ պահանջում են հաշվի նստել նախընթաց ժամանակաշրջանից ժառանգություն մնացած տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ իրողությունների հետ: Պատմական խիստ բարդ պայմաններում իրականացվող համակարգային անցումը պահանջում է այդ գործընթացը պայմանավորող ու դրա վրա ազդող բոլոր գործոնների համարժեք գնահատում ու իրականացվող բարեփոխումների քաղաքականության մեջ դրանց հաշվառում: Այս տեսակետից՝ հիմնական հետևություններից մեկն այն է, որ չեն կարող լինել արդյունավետ ու հանրության մեծամասնության շահերից բխող տնտեսական և ինստիտուցիոնալ բարե-փոխումներ, եթե անտեսվեն հասարակական միջավայրը բնութագրող արտատնտեսական համակարգերին (օրինակ՝ քաղաքական, իրավական, բարոյական, կրոնադավանաբանական, հոգեբանական և այլն) բնորոշ ու

պատմական տևական էվոլյուցիայի ընթացքում ձևավորված ազդակները:

Համակարգման եղանակները և զարգացումը

Առհասարակ, ցանկացած երկրի տնտեսական համակարգի բնույթը որոշվում է հիմնարար տնտեսական ինստիտուտների՝ սեփականության ձևի ու համակարգման

(կոորդինացիայի) հատկանիշներով: Որպես կանոն, պատմությունից հայտնի սեփականության որոշակի ձևին համապատասխանում է տնտեսական գործունեության համակարգման որոշակի տեսակ: Այս իմաստով, երկու տարբեր համակարգերը (շուկայական և ինստիտուցիոնալ) զուտ տեսական վերացարկումներ են. իրականում ազգային տնտեսական ցանկացած կազմավորում հիմնված է այդ երկու համակարգերի որոշակի զուգորդման վրա: Քաղաքակրթության հազարամյակների պատմությունը վկայում է, որ տարբեր երկրների ու ժողովուրդների ստեղծած տնտեսական տարատեսակ ու բազմաբնույթ համակարգերը միմյանցից տարբերվում են տնտեսական համակարգման այս կամ այն եղանակի գերակշռությամբ: Ու, լայն առումով, տվյալ տնտեսական համակարգի արդյունավետությունը, մրցունակությունը, արտադրողականության ու զարգացման ունակությունը պայմանավորված են այն հանգամանքով, թե տվյալ տնտեսական համակարգը որքանո՞վ է կարողանում համադրել այդ երկու հիմնական եղանակները՝ դրանք համապատասխանեցնելով տվյալ պահին առկա տնտեսական զարգացման հիմ-նախնդիրներին ու մարտահրավերներին:

Ընդհանուր առմամբ, ‚ինստիտուտ՝ ասելով կարելի է հասկանալ որոշակի կանոնների և դրանց իրագործումն ապահովող մեխանիզմների ամբողջություն: Ու. Միտչելը ինստիտուտները բնութագրելիս տալիս է հետևյալ սահմանումը. ‚Ինստիտուտները գերիշխող և վերին աստիճանի ստանդարտացված հասարակական սովորություններ են[1]: Ըստ Թ.Վեբլենի՝ ‚ինստիտուտները հասարակության, անհատի և նրանց կողմից իրա-կանացվող առանձին գործառույթների միջև հարաբերությունների մասին տարածված պատկերացումներ են, իսկ հասարակական կենսահամակարգը, որը ներկայացնում է յուրաքանչյուր հասարակության զարգացման որոշակի ժամանակահատվածում կամ ցանկացած պահի գործող կանոնների ամբողջություն, հոգեբանական տեսանկյունից կարող է ընդհանուր գծերով բնութագրվել որպես գերակայող հոգևոր դիրքորոշում կամ հասա-րակական կյանքի մասին ընդունված պատկերացումե[2]:

Ժամանակակից ինստիտուցիոնալիզմի հայտնի տեսաբաններից մեկը՝ Դուգլաս Նորթը, պնդում է, որ ինստիտուտները գոյություն ունեցող սահմանափակումների (բյուջետային, տեխնոլոգիական և այլն) պայմաններում կանխորոշում են մարդկանց գործելու շարժառիթները և ամրագրում հնարավոր ընտրանքի սահմանները՝ դրանով իսկ այս կամ այն ժամանակահատվածի համար առաջադրելով տնտեսության և ողջ հասարակության գործունեության շրջանակները[3]: Ըստ այդմ՝ ինստիտուտ ասելով պետք է հասկանալ ձևական /իրավական/ և ոչ ձևական նորմերի մի համակարգ, որը երաշխավորում, պարտադրում կամ մերժում է գործողությունների որոշակի ձևերի իրականացումը:

Սակայն ինստիտուտների վերաբերյալ Դ.Նորթի ընդհանրական սահմանումը հետևյալն է. ‚Ինստիտուտները հասարակության մեջ ‚խաղի կանոններե կամ մարդկանց կողմից ստեղծված սահմանափակումների շրջանակ են, որոնք ձևավորում են տնտեսական գործակալների միջև եղած փոխհարաբերությունները: Հետևաբար՝ դրանք են առաջարկում մարդկային փոխհարաբերությունները խթանող շարժառիթների (մոտիվների) կառուցվածքը քաղաքականության մեջ, սոցիալական ոլորտում, թե՛ տնտեսությունումե[4]:

Կարելի է պնդել, որ շուկայական և ինստիտուցիոնալ (ոչ շուկայական) եղանակները որևէ տնտեսական համակարգի անբաժանելի որակներն են, որոնք իրականության մեջ հանդես են գալիս որպես ռեսուրսների տեղաբաշխման ու մարդկանց տնտեսական գործունեության հանրային փոխհամաձայնեցման այլընտրանքային կամ մրցակցող

---

[1] **Mitchell W.,** Institutes for Research in Social Sciences. Proceedings of Association of American Universities, 1930, p. 18.
[2] **Веблен Т.,** Теория праздного класса. М., 1984, с. 201-202.
[3] **Տե՛ս Норт Д.,** Доклад на конференции по проблемам экономиеских реформ в России, организованной Национальной Академией Наук США, Вашингтон, 1996:
[4] **Норт Д.,** Институты, институциональные изменения и функционирование экономики. М., “Начала”, 1997, с 17.

մեխանիզմներ: Այս իմաստով, ցանկացած տնտեսական համակարգի զարգացումը կամ կերպափոխումը (արդիականացումը) դրա ողջ պատմության ընթացքում ներկայացնում է համակարգման նշված հիմնարար եղանակների օպտիմալ համադրման փնտրտուք: Համակարգման այդ երկու եղանակների ,օպտիմալ հաշվեկշռիե ձևավորումը տնտեսության արդիականացման, առաջադիմության ու բարգավաճման ձգտող ցանկացած հասարակության գերխնդիրներից է:

Նշված երկու հիմնարար գործոնները պայմանավորում են ինչպես տնտեսական սուբյեկտների փոխներգործության եղանակները, այնպես էլ տնտեսության նյութատեխնոլոգիական միջավայրն ու, հատկապես՝ վերջինիս տեխնոլոգիական փոփոխությունները: Ընդ որում՝ հասարակության հիմնական տնտեսական, քաղաքական, իրավական, սոցիալական և բազմաթիվ այլ կարգի ինստիտուտներ պայմանավորում են մարդկանց տնտեսական փոխներգործության և ինտեգրման բնույթն ու եղանակները: Այս երկու տնտեսական ինստիտուտներից յուրաքանչյուրը որոշիչ դեր ունի սահմանափակ տնտեսական ռեսուրսների բաշխման, տեղաբաշխման ու համակցման մեջ: Դրանք միմյանց նկատմամբ գտնվում են հակասական միասնության մեջ և, փոխներգործելով, պայմանավորում են տնտեսական համակարգի մրցունակությունը, կայունությունն ու կենսունակությունը:

Մեկ այլ Նոբելյան մրցանակակիր՝ Օ.Վիլյամսոնը, իր հերթին, զգուշացնում է, որ արտաքին միջավայրից պատրաստի ինստիտուտների ներմուծումը ու արհեստականորեն պարտադրումը դրանց պահանջներին անընկալունակ հասարակություններին, կարող է ոչ ցանկալի, սպասվածին հակառակ արդյունքները տալ: Նա առաջարկում է ձեռնպահ մնալ տնտեսավարման որոշակի պայմաններին համապատասխանող կազմակերպության մոդելն այլ սոցիալ-տնտեսական ենթատեքստ ունեցող միջավայր տեղափոխելուց[5]:

Թերևս ճիշտ է նկատում Դ.Նորթը. ,....տնտեսական զարգացումը հետազոտողների հիմնական սխալն այն է, որ նրանք տնտեսական աճի գլխավոր գործոն են համարում տեխնոլոգիայի զարգացման մակարդակը: Աճի հանգուցային գործոնն իրականում ինստիտուցիոնալ կառուցվածքն է և դրա ազդեցությունը ոչ միայն հայտնագործությունների և նորամուծությունների, այլև արտադրական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման, ապրանքների ու ռեսուրսների շուկաներում տրանսակցիոն ծախքերի իջեցման, պայմանագրերի կատարման նկատմամբ վերահսկողության իրավական մեխանիզմների ստեղծման, սեփականության իրավունքների պաշտպանության խթանների, իսկ ամենակարևորը՝ այդ խթանների պահպանման վրաե[6]: Վերջին երկու հարյուրամյակի ընթացքում տնտեսական, քաղաքական ու սոցիալական ոլորտներում արևմտյան քաղաքակրթության արձանագրած տպավորիչ սոցիալ-տնտեսական և գիտատեխնոլոգիական առաջընթացը, այդպիսով, բացատրվում է մրցունակ ու զարգացմանը միտված ինստիտուցիոնալ համակարգերի առկայությամբ:

Բնականաբար, տնտեսության համակարգափոխության գործընթացները դիտարկելիս, առավել ևս՝ արդյունավետ ու սահուն անցում ապահովող քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել նախընթաց զարգացման ողջ ժամանակահատվածի ժառանգությունը: Այս առումով հարկ է նկատի առնել, որ, գտնվելով զարգացման որոշակի փուլում, ամբողջատիրական անցյալ ունեցած հասարակության համար չափազանց բարդ է շատ կարճ ժամանակահատվածում արմատապես փոխել զարգացման ուղին (վեկտորը), ձևավորել տեխնոլոգիապես արդիական ու միջազգային չափանիշներով մրցունակ տնտեսություն: Այս իրողության պատճառներից են ժառանգած որոշակի ինստիտուտների առկայությունը և մարդկանց վարքագծի վրա դրանց որոշիչ ազդեցությունը:

---

[5] Տե՛ս **Уильямсон О.,** Экономические институты капитализма. /Катькало В.. Вступительная статья/. СПб., „Лениздат”, 1996, էջ 15:

[6] **Норт Д.,** Парадокс Запада. „Институциональная экономика”.

http://www.ie.boom.ru/Referat/North3.htm.

Ինստիտուտները, փաստորեն, ձևավորում են խթանների այնպիսի համակարգեր, որոնք, ի վերջո, պայմանավորում են հասարակության զարգացման այս կամ այն հարացույցը, նրա արդիականացման սոցիալապես ընդունելի տարբերակը։ Հարկ է նկատի առնել նաև, որ վարքագծի ոչ ֆորմալ ձևերը, լինելով մշակութային արժեքների ածանցյալներ, էապես պայմանավորում են ինստիտուցիոնալ միջավայրի յուրահատկությունները՝ ապահովելով փոփոխությունների էվոլյուցիոն բնույթը, աստիճանականությունն ու փուլայնությունը։ Սա է պատճառը, որ եթե ձևական կանոնները, ասենք՝ օրենքները, կարելի է փոփոխել ակնթարթորեն, շատ արագ՝ պետության հարկադրանքի ուժով, ապա վարքագծի ոչ ֆորմալ կանոնները միանգամից փոխելն անհնար է. սրանց փոփոխությունը տևական ժամանակ, ջանքեր ու հաճախ հավելյալ ռեսուրսներ է պահանջում։ Այս պայմաններում կտրուկ փոփոխություններն ու թռիչքները գործնականում դառնում են անհնար։ Ասենք՝ ամբողջատիրական համակարգից ժողովրդավարական համակարգին անցման շրջանում եթե առաջադիմական վերնախավը ցանկանա արագ փոփոխություններ անել, միևնույն է, բախվելու է լուրջ արգելքների՝ զորեղ խմբային շահերի։

Ընդհանրացնելով ինստիտուտների վերաբերյալ դիտարկումները՝ կարող ենք առանձնացնել որոշակի հատկանիշներ։ Դրանք՝

• Ապահովում են գործողությունների որոշակի համախմբության արդյունքների կանխատեսելիությունը և այդկերպ պայմանավորում տնտեսական գործունեության կամ գործարքների կայունությունը։

• Օժտված են ժառանգման հատկանիշներով, որի հիմքում ուսուցումն է, ինչը սովորաբար իրականացնում են մասնագիտացված կազմակերպությունները։

• Բնութագրվում են խթանների համակարգի առկայությամբ. դրանք կարող են լինել ինչպես դրական (փոխհատուցում, խրախուսանք), երբ մարդիկ հետևում են ընդհանուր խաղի կանոններին, այնպես էլ՝ բացասական (պատժամիջոց, սանկցիա), որոնք կիրառվում են ընդհանուր խաղի կանոնները խախտելու դեպքում։

• Ապահովում են մարդկանց գործողությունների ազատությունը և անվտանգությունը որոշակի շրջանակներում, որոնք բարձր են գնահատվում շահագրգիռ մյուս տնտեսական խաղորդների կողմից։ Սովորաբար այդ շրջանակները երկուսն են. *առաջինն* այն ինստիտուցիոնալ շրջանակն է, որտեղ մարդն ունի գործողությունների ազատություն և զերծ է ֆորմալ պատժամիջոցների (օրենքների) ազդեցությունից, *երկրորդում* մարդն ունի գործունեության ազատություն և զերծ է ոչ ֆորմալ կանոնների, պատժամիջոցների ազդեցությունից։ Ոչ ֆորմալ ինստիտուտների միջոցով կիրառվող պատժի ամենատարածված ձևը հասարակական պարսավանքն է։

• Կրճատում են տրանսակցիոն ծախքերն այնպես, ինչպես տեխնոլոգիաներն են նվազեցնում արտադրության ծախսերը։

Կարելի է առանձնացնել ինստիտուտների հիմնական գործառույթները։ Այսպես՝

• Ինստիտուտները կարգավորում են մարդկանց փոխհարաբերություններն այնպես, որ նրանք կորուստների հնարավորինս նվազագույն չափով կամ նույնիսկ առանց կորուստների կազմակերպեն իրենց գործարքները։

• Ինստիտուտները նվազագույնի են հասցնում մարդկանց՝ անհրաժեշտ գործընկերներ փնտրելու և գտնելու, նրանց հետ պայմանավորվելու ջանքերը։ Խոսքը վերաբերում է ինչպես ապրանքներին, այնպես էլ տարաբնույթ արժեքներին։

Տեխնոլոգիական փոփոխությունների ինստիտուցիոնալ սահմանափակումները

Ինստիտուտների երկարակեցությունը մասամբ պայմանավորված է նրանով, որ դրանք տնտեսական համակարգի մասնակիցների շրջանում առաջացնում են կայուն, հաստատուն սպասումներ: Ընդհանուր առմամբ՝ ինստիտուտները, ձևավորելով և կանխատեսելի դարձնելով մարդկանց գործողությունները, կարգավորում են մտածողությունը, սպասումները և անհատների գործողությունները: Ինստիտուտները և՛ սահմանափակում են վարքագիծը, և՛ ուղղորդում այն: Կանոնների գոյությունն ինքնին ենթադրում է սահմանափակումների առկայություն: Սակայն այսպիսի սահմանափակումը գործողությունների և ընտրության նոր հնարավորություններ է տալիս, որոնք հակառակ դեպքում չէին լինի: Խոսքը վերաբերում է զարգացման հատկապես նոր հնարավորություններ ստեղծող տեխնոլոգիական փոփոխություններին:

Ինստիտուցիոնալ տնտեսագիտության շրջանակներում մշակվել է մի վարկած, ըստ որի՝ տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ փոփոխությունների միջև գոյություն ունի որոշակի փոխկապվածություն: Ինստիտուցիոնալ փոփոխությունները բարդ երևույթներ են, քանի որ ոչ ֆորմալ ինստիտուտները և կանոնները չեն կարող փոփոխվել շատ կարճ ժամանակահատվածում: Ավելին, այդ փոփոխությունները կրում են աստիճանական կամ բարելավումային (ինկրեմենտալ, այսինքն՝ հին ինստիտուտների հետագիծը գերակշռող է նոր նորմերի նկատմամբ), այլ ոչ թե դիսկրետ բնույթ: Դրա էությունն այն է, որ ինկրեմենտալ և անգամ դիսկրետ փոփոխությունները բացարձակապես դիսկրետ չեն, քանի որ ոչ ֆորմալ սահմանափակումները արմատավորված են հասարակության արժեհամակարգում ու մտածելակերպում: Ֆորմալ սահմանափակումները կարելի է փոփոխության ենթարկել ,մեկ գիշերվա ընթացքումե՝ նոր օրենքներ կամ որոշումներ ընդունելով, սակայն ոչ ֆորմալ սահմանափակումները փոփոխությունների նկատմամբ նվազ զգայուն են: Այդ մշակութային սահմանափակումները ոչ միայն ներկան և ապագան կապում են անցյալի հետ, այլև ցույց են տալիս պատմական զարգացման հետագիծը:

Կարելի է պնդել, որ ինստիտուտները ձևավորում են հասարակության զարգացման (տեխնոլոգիական) հնարավորությունները: Իսկ կազմակերպությունները (ընկերությունները) ստեղծվում են այդ հնարավորությունները իրացնելու համար և զարգացման ընթացքում ինստիտուտները ենթարկում են փոփոխության: Ե՛վ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ ինստիտուցիոնալ սահմանափակումները հանգեցնում են որոշակի կազմակերպությունների առաջացմանը, որոնք կառուցվածքավորում են հասարակության փոխհարաբերությունները: Դրանք առաջանում են ինստիտուցիոնալ համակարգում եղած ազդակների հաշվին, ուստի դրանց արդյունավետությունը կախված է համակարգի գործունեությունից:

Փոփոխությունները սովորաբար ենթադրում են որոշակի հարմարեցում ինստիտուցիոնալ համակարգում առկա հնարավորությունների, կանոնների, նորմերի և հարկադրանքների պայմաններին: Ինստիտուցիոնալ փոփոխությունների համար կարևոր աղբյուր է հարաբերական գների փոփոխությունը: Վերջինս ներառում է արտադրության գործոնների, ինֆորմացիայի, տեխնոլոգիայի գների փոփոխությունները: Դրանք մեծ մասամբ ներծին (էնդոգեն) են և ցույց են տալիս անհատի գործունեության ուղղությունը: Հարաբերական գների փոփոխությունները հանգեցնում են ինստիտուցիոնալ փոփոխությունների, ինչի հետևանքով կարող է տեղի ունենալ ինստիտուցիոնալ հավասարակշռության խախտում: Այս տեսակետից, ինստիտուցիոնալ հավասարակշռության դեպքում, խաղորդների ուժերի համադրության արդյունքում ստեղծվում է մի վիճակ, երբ ոչ մի խաղացողի ձեռնտու չի լինում, օգտագործելով հավելյալ

ռեսուրսներ, փոփոխել պայմանագիրը։ Ընդ որում՝ դա չի նշանակում, որ բոլոր խաղացողներն այդ դեպքում գոհ են գործող կանոններից և պայմանագրերից։ Սա միայն մի բան է նշանակում. խաղի փոփոխման ծախքերի և շահումների տվյալ համադրության դեպքում նրանց ձեռնտու չէ փոփոխել խաղը։ Սա Նեշի հավասարակշռության յուրօրինակ դեպքերից մեկը կարելի է համարել։ Այդպիսով՝ գոյություն ունեցող ինստիտուցիոնալ սահմանափակումները որոշում են հավասարակշռության պայմանները և ձևավորում այն։

Ինստիտուցիոնալ փոփոխությունների գործընթացը կարելի է բնութագրել հետևյալ կերպ. գների փոփոխություն կատարում են գործարքի մեկ կամ երկու կողմն էլ՝ կախված այն հանգամանքից, թե կողմերից որին է ավելի ձեռնտու այդ փոփոխությունը։ Դրանից կախված էլ՝ կողմերը փորձում են վերանայել պայմանագրերը։ Սակայն, քանի որ պայմանագրերը գտնվում են աստիճանակարգման համակարգում, պայմանների վերանայումը հնարավոր չէ առանց կանոնների ավելի բարենպաստ համադրության։ Այդ դեպքում այն կողմը, որ փորձում է փոփոխել նորմերը, կձգտի ծախսել ավելի շատ ռեսուրսներ մրցունակության ավելի բարձր մակարդակ ունենալու համար։ Ընդ որում՝ ֆորմալ կանոններում փոփոխությունները սովորաբար պահանջում են ռեսուրսների շատ ավելի մեծ ծախս։ Ձեռնարկատերերը և նրանց կողմից ղեկավարվող կազմակերպությունները արձագանքում են գների փոփոխությանը՝ ռեսուրսները վերաուղղելով նոր, առավել շահեկան ծրագրերի իրացմանը։ Ձեռնարկատերերը քաղաքականության և տնտեսության ոլորտներում կարող են իրենց գիտելիքները և տաղանդը ուղղել շահեկան հնարավորությունների որոնմանը՝ այդ գործընթացում համադրելով հնարավոր ռիսկերը և շահույթները։ Ակնհայտ է, որ կազմակերպությունների արդյունավետությունը կախված է այդ հնարավորությունների ճիշտ օգտագործումից։

Ի վերջո՝ ինչպե՞ս են փոփոխվում ոչ ֆորմալ սահմանափակումները, լայն իմաստով՝ մշակույթը։ Բնականաբար, մշակութային բնութագրիչները առավել տևական ժամանակի ընթացքում փոփոխվում են, և այս դեպքում զգալի ազդեցություն են ունենում պատահականությունները, կրթությունը և բնական ընտրությունը։ Ըստ մշակութային միջավայրի կայունության՝ ոչ ֆորմալ սահմանափակումները փոփոխվում են այլ տեմպերով, քան ֆորմալ կանոնները։ Որպես կանոն՝ ֆորմալ կանոններում փոփոխությունները հանգեցնում են անհավասարակշիռ վիճակի, ուստի հավասարակշռության հաստատումը կախված է ֆորմալ և ոչ ֆորմալ սահմանափակումների և մեխանիզմների համադրությունից։

Ինստիտուցիոնալ փոփոխությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք բացառապես ինկրեմենտալ (բարելավումային) բնույթ են կրում։ Պատճառը ոչ ֆորմալ կանոնների առկայությունն ու ազդեցությունն է։ Այս առումով, ոչ ֆորմալ սահմանափակումները հանգեցնում են անցյալից կախվածության հետագծին, իսկ ֆորմալ սահմանափակումները՝ ոչ։ Թեև ֆորմալ կանոնների համակարգը կարելի է ամբողջությամբ փոխել, սակայն ոչ ֆորմալ սահմանափակումները երկար կյանք ունեն, քանի որ դրանք առաջվա պես օգնում են հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում հիմնարար խնդիրների լուծմանը։

,QWERTYե էֆեկտները և անցյալի հետագծից կախվածությունը

Ինչպես տեխնոլոգիաները, այնպես էլ ինստիտուտներն իրենց ճանապարհը հարթում են մրցակցության մեխանիզմների միջոցով։ Ու երբեմն կարող է ստացվել այնպես, որ ոչ արդյունավետ ինստիտուտները գերակա դիրք գրավեն, և արդյունավետ ինստիտուտների

բնական ընտրություն տեղի չունենա։ Այս երևույթի դիտարկումը տեսաբաններին հանգեցրել է, այսպես կոչված, ‚ինստիտուցիոնալ ծուղակներիե գաղափարին։ Ինստիտուցիոնալ ծուղակը, ըստ էության, ոչ արդյունավետ նորմ է (ոչ արդյունավետ ինստիտուտ), որն ինքնակարգավորման հատկություն ունի[7]։ Ըստ այդմ՝ եթե համակարգում գերակշռում է ոչ արդյունավետ նորմը, ապա ուժեղ տատանման հետևանքով համակարգը կարող է ընկնել ‚ինստիտուցիոնալ ծուղակիե մեջ և այդ վիճակում մնալ անգամ արտաքին ազդեցության դադարումից հետո[8]։

Դիտարկումները ցույց են տալիս, որ տեխնիկական համակարգում փոփոխությունների ավելացումը, որը զարգացման նախընթաց փուլում արդեն որոշակի ուղղվածություն է ձեռք բերել, կարող է հանգեցնել այլ լուծումների նկատմամբ տվյալ տեխնիկական լուծման գերազանցությանն անգամ այն դեպքում, երբ առաջին տեխնիկական ուղղությունը, ի վերջո, կհամարվի պակաս արդյունավետ, քան մինչ այդ առաջարկված լավագույն այլընտրանքները։ Այդպիսով, մեկ անգամ ընկնելով ինստիտուցիոնալ ծուղակի մեջ, համակարգն ընտրում է զարգացման անարդյունավետ ճանապարհ, ընդ որում՝ ժամանակի ընթացքում անցումն առավել արդյունավետ հետագծի կարող է ռացիոնալ չլինել։

Որպես այդպիսի օրինակ կարող է ծառայել Փոլ Դեյվիդի կողմից նկարագրված QWERTY- էֆեկտը[9], ինչը յուրահատուկ ինստիտուցիոնալ ծուղակ է։ Խոսքն այն մասին է, թե ինչպես 20-րդ դարի 70-ական թվականներին համակարգիչ արտադրողները ստեղնաշարի վրա պահպանեցին գրամեքենայի ստեղների անարդյունավետ դասավորությունը (QWERTY համակարգը), այն դեպքում, երբ մշակված էր ավելի արդյունավետ տարբերակ (Դվորակի համակարգը)։ Փ.Դեյվիդը հետազոտել է, թե ինչով է պայմանավորված անգլերեն տառերի այդօրինակ կայուն դասավորությունը համակարգչի ստեղնաշարի վրա։ Առաջին տպագրական մեքենաների վրա դա կատարվել էր պատահականության սկզբունքով. մասնավորապես՝ առաջին շարքում տեղադրվել են այն տառերը, որոնք անհրաժեշտ էին շրջիկ-գործակալներին հնարավոր գնորդի ներկայությամբ փաստաթղթերը տպագրելու համար։ 65 տարի անց, երբ առաջարկվեց տպագրության արագությունը 20-40%-ով արագացնող տառերի նոր դասավորություն, նոր համակարգին անցնելու համար պետք էր վերառակավորել բոլոր մեքենագրողներին։ Թեև այս մասնագիտության մասսայականությունը նպաստում էր մեկ մեքենագրողի ուսուցման ծախքերի կրճատմանը, սակայն տեխնոլոգիապես ավելի կատարյալ համակարգին անցումը ռացիոնալ չէր դիտվում։ Փաստորեն, մի կողմից՝ համակարգիչ արտադրողների միջև բացառվում էր համաձայնությունը՝ համակարգված ձևով ավելի արդյունավետ ստեղնաշարին անցում կատարելու, քանի որ առկա էր մրցակցություն և անհամաչափ տեղեկատվության հաղթահարման հիմնախնդիրը։ Մյուս կողմից՝ չափազանց մեծ կարող էին լինել միլիոնավոր մեքենագրուհիների վերառակավորման հետ կապված ծախսերը։

Ինստիտուցիոնալ մոտեցման տեսանկյունից ‚QWERTYե էֆեկտի առաջացումը կարելի է բացատրել երկու հանգամանքով.

1. Տնտեսական համակարգի խաղորդների տարբեր խմբերի շահերի տարամիտվածությամբ. արտադրողների նպատակը հնարավորինս շատ և արագ վաճառելն էր, ինչի համար ընտրվել էր ստեղնաշարի վրա տառերի արդեն հաստատված դասավորությունը։ Սպառողների նպատակն էր բարելավել փաստաթղթերի մշակման որակը և մեծացնել տպագրության արագությունը։ Բնականաբար, եթե ստեղնաշարի վրա տառերի արդեն ընդունված տեղադրությունը փոփոխության ենթարկվեր, ապա արտադրողները

[7] Տե՛ս **Норт Д.**, Институты, институциональные изменения и функционирование экономики. М., “Начала”, 1997, էջ 21:
[8] Տե՛ս **Полтерович В.М.,** Институциональные ловушки и экономические реформы. М., ‚Российская экономическая школа”, 1998, էջ 21:
[9] Տե՛ս **David P.,** Clio and the Economics of QWERTY. American Economic Review, 1985, vol. 75, թիվ 2:

կկորցնեին շահույթի զգալի մասը։ Սակայն նպատակի երկակիությունը հանգեցնում է առաջնային պահանջարկի բավարարման և QWERTY-էֆեկտային ապրանքների արտադրության ընդլայնման, ինչը մասշտաբի էֆեկտի արդյունք է։ Այդպիսով՝ ձևավորվում է ծուղակ, որից դուրս գալը կապված է հավելյալ ծախքերի հետ (արդեն աշխատող կադրերի կրթության, վերապատրաստման, արտադրության վերառորակավորման, նոր ստեղնաշարով մեքենաներ արտադրելու, ինչպես նաև նոր արտադրանքի արդյունավետության մեջ սպառողներին համոզելու և այլն)։

2. Կարճաժամկետ և երկարաժամկետ որոշումների համաձայնեցման խնդիր է առաջանում։ Այս դեպքում անհամաձայնությունը կապված է արդյունավետության և անհամաչափ տեղեկատվության հետ։ Քանի որ տնտեսական գործակալները տիրապետում են ոչ լիարժեք տեղեկությունների, մասնավորապես՝ ապագա տեխնիկական լուծման վերաբերյալ, որը կապված է նաև հասարակության անդամների ըմբռնման կարողություններ-ի հետ, ապա սխալ կլինի խոսել տեխնոլոգիայի արդյունավետության մասին ընդհանրապես և կարելի է մտածել միայն համեմատական արդյունավետության մասին՝ ժամանակի որոշակի պահի համար։ Այս ամենի հետևանքով տեղի է ունենում հարաբերականորեն ոչ արդյունավետ ստանդարտների պահպանում։

Թեև ինստիտուցիոնալ ծուղակները կարճաժամկետում մեղմում են թռիչքային անցումները և որակավորման կորուստը, սակայն երկարաժամկետում կասեցնում են տնտեսական աճը։ Այսպիսով՝ ինստիտուցիոնալ ծուղակների առաջացման հիմնապատճառներից մեկը, ինչպես և QWERTY-էֆեկտների դեպքում, տնտեսական գործակալների կարճաժամկետ և երկարաժամկետ շահերի հակասությունն է, նրանց վարքագծային տարբերությունը, որոնք հիմնված են այդ շահերի և տնտեսական արդյունավետության հաշվառման վրա։

Կերպափոխվող տնտեսության մեջ հասարակական արժեքների բազային համակարգը փոփոխության է ենթարկվում. որպես կանոն, վարքագծային երկարաժամկետ մոդելից անցում է կատարվում կարճաժամկետի։ Պատճառն այն է, որ անորոշության և անկայունության պայմաններում երկարաժամկետ պլանները միայն ծախսերի պատճառ են դառնում, իսկ կարճաժամկետում գործարքները ստիպում են տնտեսական խաղորդներին հրաժարվել երկարաժամկետ ծրագրերից։ Այս գործընթացը տեղի է ունենում պետության, իրավական համակարգի, գործընկերների վստահության ինստիտուտների փլուզմանը զուգահեռ։ Այսպիսով՝ անցումային հասարակությունը ներքաշվում էր համակարգային ինստիտուցիոնալ ծուղակի մեջ։

Որպես ինստիտուցիոնալ ծուղակների առաջացման պատճառ կարելի է նշել.

1. Սարքավորումների և նորմերի գործառության ժամկետների տարբերությունը (ֆիզիկական մաշվածքի՝ բարոյականի ժամկետի գերազանցում)։ Խոսքն այն մասին է, որ հին սարքավորումների փոխարինումը նորերով հաճախ ավելի մեծ ծախսեր է պահանջում, քան անցման ծախքերն են, ուստի սարքավորումներն օգտագործվում են մինչև ֆիզիկական մաշվածքի ենթարկվելը։ Դա վերաբերում է ոչ միայն տեխնիկային, այլև ցանկացած ինստիտուցիոնալ փոփոխությանը, քանի որ ցանկացած ռեֆորմի իրականացումը պահանջում է ոչ միայն դրամական ռեսուրսներ, այլև հոգեբանության, ընդհանրապես՝ արժեքային համակարգի փոփոխություն (այսինքն՝ ոչ դրամական ծախսեր)։ Ուստի հաճախ հին նորմերը ,նորոգում ենե՝ փոփոխելու փոխարեն, մասնավորապես՝ լրացումներ են կատարում հին օրենքում՝ նորը ընդունելու փոխարեն։

2. Համակարգի տարրերի փոխկապվածությունը (էմերջենտությունը). օրինակ՝ երկաթգիծը, որի ստանդարտի փոխարինումը կապված է մեծ ծախսերի հետ։ Ուստի այստեղ նոր ստանդարտները հարմարեցվում են հներին։

3. Սահմանային օգտակարության մեծության փոփոխությունների անորոշությունը։ Երբ մրցակցում են երկու տեխնոլոգիաներ, հնարավոր չէ ենթադրել, թե ինչպես կփոփոխվեն դրանցից ակնկալվող օգտակարությունների սահմանային մեծությունները։ Այս մոտեցման համաձայն՝ առաջին տեխնոլոգիայի օգտակարությունը կարող է ժամանակի ընթացքում զիջել երկրորդին, կամ հակառակը։

4. Մասշտաբից տնտեսման էֆեկտը։ Այսպես՝ երբ հին ստանդարտը արմատացել է, առավել նպատակահարմար է կատարելագործել հին, ոչ հաջող նորմը, քան նորը ստեղծել։

Նկատենք, որ ինստիտուցիոնալ ծուղակների առաջացման առաջին երկու պատճառները կրում են ընդհանրական բնույթ, միշտ գոյություն ունեն, իսկ վերջին երկուսը առանձնահատուկ են։

Ինստիտուցիոնալ ծուղակից ելքը կապված է գործարքային բարձր ծախքերի հետ, որը պայմանավորված է վերառորակավորման խնդիրներով, ինչպես նաև ոչ արդյունավետ նորմերի տևական գոյությամբ։ Դա կարող է կատարվել նաև այնպիսի ուժերի միջոցով, ինչպիսիք են պետությունը, հեղինակություն ունեցող խմբերը և այլն։

Նորինստիտուցիոնալ տեսության շրջանակներում կարելի է առանձնացնել ինստիտուցիոնալ ծուղակից դուրս գալու երկու եղանակ.

1. Էվոլյուցիոն, որի դեպքում ելքի պայմանները ձևավորվում են տնտեսական համակարգում, օրինակ՝ ինստիտուցիոնալ ծուղակի փլուզմանը կարող է նպաստել տնտեսական աճի արագացումը, համակարգային ճգնաժամը և այլն։ Շրջադարձային պահը վրա է հասնում (պատմության բիֆուրկացիոն փուլը), երբ ոչ արդյունավետ նորմերի կարգավորման տրանսակցիոն ծախքերը մեծ են լինում հին նորմի դուրսմղման կամ նոր նորմի հաստատման տրանսակցիոն ծախքերից։ Որպես որոշիչ մեծություն այս դեպքում կարելի է դիտարկել նոր ինստիտուտների հարմարվողականությունը, ինչպես նաև ոչ արդյունավետ նորմերի հետագա գործողության սոցիալ-տնտեսական հետևանքները։

2. Հեղափոխական, որի ժամանակ հին նորմի դուրսմղումը տեղի է ունենում հարկադրանքի միջոցով, որով փոփոխության են ենթարկվում հասարակության մշակութային արժեքները պետության կամ նրա անունից հանդես եկող առանձին խմբերի կողմից։ Եթե դրանք վերաբերում են սեփականության իրավունքներին, ապա անցումը տեղի է ունենում աստիճանաբար, ինչը անցման ծախքերի բարձրացման պատճառ է դառնում։ Այս դեպքում հաջողությունը կախված է միջոցների հարաբերակցությունից և մինչև վերջ գնալու պատրաստակամությունից (քաղաքական կամքից)։

Ինստիտուցիոնալ ծուղակից ելքի ծախքերը կարելի է դասակարգել ըստ՝

1. նոր նորմերի սահմանման,
2. մշակութային իներցիայի հաղթահարման,
3. հին նորմի լոբբինգի մեխանիզմի վերացման,
4. նոր ինստիտուցիոնալ միջոցներին նոր ինստիտուտների հարմարվողականության,

5. համապատասխան նորմերի ձևավորման, առանց որոնց նոր նորմերի կարգավորումը արդյունավետ չի լինի։

Ինստիտուցիոնալ ծուղակներին բնորոշ հետևանքներից մեկն այն է, որ, չնայած դրանք մեղմում են անպատրաստ, շատ արագ վերափոխումների կարճաժամկետ բացասական հետևանքները, միևնույն ժամանակ խանգարում են երկարաժամկետ տնտեսական աճին։ Որոշիչ է նաև վարքագծային մոդելի փոփոխությունը երկարաժամկետից կարճաժամկետի։ Անցումային տնտեսություններում 1990-ականների կեսերին տնտեսական խաղորդների օգուտները կարճաժամկետ գործառնություններից՝ հիմնականում ներմուծվող ապրանքների առուվաճառքից, մի քանի անգամ գերազանցում էին արտադրության մեջ ներդրումներ կատարելու օգուտը, քանի որ սեփականության իրավունքների վերաբաշխումից հետո խոսքի իրավունքը ոչ թե նրանն էր, ով արդյունավետ էր կառավարում, այլ նրանը, ով հայտնվել էր, ինչպես ասում են՝ ‚ճիշտ վայրում, ճիշտ ժամանակինե։ Մի քանի անգամ անհաջող երկարաժամկետ ներդրումներից հետո տնտեսական գործակալները ստիպված էին փոխադրել ենթարկել վարքագծային մոդելը, իրենց գործունեությունը փոխադրել բարձր շահութաբերություն ենթադրող կարճաժամկետ գործարքների տիրույթ։

Ինստիտուցիոնալ ծուղակներից դուրս գալու գործում հիմնական դերը, անշուշտ, պատկանում է պետությանը, քանի որ միայն Կառավարությունը կարող է առաջինը երկարաժամկետ որոշում կայացնել։ Հասկանալի է, որ անգամ պետությունն է ձգտում կարճաժամկետ որոշումներ ընդունել, ինչպես օրինակ՝ պետական բյուջեի պակասուրդի ծածկումը արտաքին վարկի կամ ներքին պարտքի ավելացման միջոցով։ Կարելի է պնդել, որ ինստիտուցիոնալ ծուղակը առաջանում է ավելի կարճ ժամկետում, քան հնարավոր է դրանից դուրս գալ։ Դա բացատրվում է նրանով, որ տնտեսական գործակալների՝ ‚երկարաժամկետ օգուտե հասկացության ընկալման համար ավելի երկար ժամանակ կպահանջվի, քան հակառակ վարքագծի որդեգրման համար։ Գոյություն ունի ժամանակային լագ որոշումների ընդունման և նորարարների ու պահպանողականների կողմից օգուտի ստացման միջև։ Վերջիններս երկարաժամկետ ներդրումների վերաբերյալ որոշում ընդունում են միայն այն բանից հետո, երբ նորարարները ստանում են ոչ թե միանգամյա, այլ մշտական եկամուտ։ Ինստիտուցիոնալ ծուղակից դուրս գալը երկարաժամկետ է և շատ դժվար։ Այդ պատճառով ինստիտուցիոնալ ծուղակը հաղթահարելու էվոլյուցիոն եղանակը հնարավոր է միայն պետության շնորհիվ։ Քանի դեռ պետությունը չի փոխում իր քաղաքականությունը կարճաժամկետից երկարաժամկետի (մասնավորապես՝ ներդրումներ մարդկային կապիտալում), ինչը կփաստի մտադրության լրջությունը, տնտեսական գործակալներն իրենց վստահ չեն զգում և չեն կատարում երկարաժամկետ ներդրումներ։

Պետք է նշել նաև, որ ինստիտուցիոնալ ծուղակները խոչընդոտում են երկարաժամկետ արդյունավետ զարգացմանը և նպաստում կարճաժամկետ, չնախապատրաստված նորմերի ներդրման բացասական ազդեցությունների մեղմմանը, ուստի արմատավորվում են տնտեսական համակարգում։

Տեխնոլոգիական մակրոգեներացիաները և ինստիտուցիոնալ կարգավորումը

Կարելի է պնդել, որ անցյալի զարգացման հետագծից կախվածությունը, լինելով հիմնարար գործոն, իր որոշիչ ազդեցությունն է թողնում տնտեսության ինչպես միկրո-, այնպես էլ մակրոմակարդակների վրա։ Զարգացման նախընթաց մակարդակից կախվածությունը նախևառաջ էվոլյուցիոն բնույթ է հաղորդում տվյալ ընկերությունում և, ամբողջությամբ վերցրած՝ ճյուղի շրջանակներում ընթացող նորաստեղծական

գործընթացներին: Տեխնոլոգիական փոփոխությունները տնտեսական համակարգի վրա ազդում են մակրոգեներացիաների առաջացման և զարգացման մեխանիզմների միջոցով:

,Մակրոգեներացիանե տվյալ տեխնոլոգիական ուղղության շրջանակներում ձևավորված տնտեսական համակարգ է, որը բնութագրվում է որոշակի հենքային տեխնոլոգիայի հիման վրա ձևավորված նոր համակցմամբ ստեղծված արտադրության (թողարկման) և ռեսուրսային բազայի ուրույն ամբողջությամբ: Ըստ էության, յուրաքանչյուր հենքային տեխնոլոգիական նորամուծություն հարուցում է միմյանց հաջորդող տեխնոլոգիական կատարելագործումների (սերունդների) որոշակի շղթա, ինչը, իր հերթին, առաջացնում է տնտեսական փոփոխություններ: Ըստ էվոլյուցիոն տեսության հայեցակետի՝ տեխնոլոգիական մակրոգեներացիաների առաջացումը որոշակի մակրոտնտեսական պայմանավորվածություններ ու ազդեցություններ ունի, որոնց հաշվառումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն որոշակի գործարար ֆիրմայի վարքագծի կարգավորման, այլև մակրոտնտեսական արդյունավետ քաղաքականության ձևավորման և իրականացման տեսանկյունից:

Էվոլյուցիոն հայեցակետի[10] համաձայն (Ռ.Պոզներ, Ս.Ուինթեր, Վ.Մանսկի և այլք)՝ տեխնոլոգիական մակրոգեներացիաները առաջանում են գործարար պարբերաշրջանի անկման փուլում, իսկ դրանց աճն ու զարգացումը տեղի է ունենում պարբերաշրջանի վերելքի փուլում: Այդ ,նորե մակրոգեներացիայի ծագման նախադրյալներն են. **առաջին՝** ,հինե մակրոգեներացիաները սպառել են իրենց աճի ներուժը տարբեր պատճառներով, որոնցից կարելի է առանձնացնել դրանց միջոցով ստեղծված արտադրանքի նկատմամբ պահանջարկի կրճատումը, եկամտաբերության ոչ բարձր մակարդակը: Այս նախապայմանը նոր մակրոգեներացիայի առաջացման ճանապարհն է հարթում:

Երկրորդ՝ թեև նոր մակրոգեներացիան դեռևս չի սկսել իր նորամուծական ապրանքների զանգվածային արտադրությունը, այդ ժամանակահատվածում նա հասցնում է զգալի նախապատրաստական աշխատանքներ կատարել: Մասնավորապես՝ նորարարները, ովքեր հարուցում են նոր մակրոգեներացիա, պետք է իրականացնեն անհրաժեշտ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ, նորույթների նմուշօրինակների փորձարկումներ: Նրանք պետք է ստեղծեն համապատասխան սարքավորումներ նորամուծական ապրանքների արտադրության համար (նոր արտադրական հզորություններ մշակեն կամ վերակառուցեն գործողները), ծավալեն նոր արտադրանքի զովազդի գործողություններ՝ ուղղված դրա նկատմամբ պահանջարկի ձևավորմանը: Այս ամենը, բնականաբար, բավականաչափ ներդրումներ է պահանջում, հետևաբար՝ փոխառություններ, բաժնետոմսերի թողարկում և այլն: Սրա վերաբերյալ Յո. Շումպետերը գրել է. ,Նորարարը ձգտում է հաջողության՝ առաջացնելով պարտքերե[11]:

Այդպիսով՝ նոր մակրոգեներացիան, անցնելով իր զարգացման ելակետային փուլը, հումքի, էներգիայի, աշխատանքային ռեսուրսների շուկաներից փորձում է գնել բոլոր այդ գործոնները և սկսել նորամուծական ապրանքների զանգվածային արտադրությունը: Քանի որ հումքի, էներգիայի և աշխատանքային ռեսուրսների շուկաներում դեռևս գործում են հին մակրոգեներացիաները, նոր մակրոգեներացիայի ի հայտ գալն առաջ է բերում ռեսուրսների նկատմամբ պահանջարկի աճ, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեսուրսների առաջարկը սահմանափակ է, պահանջարկի գերազանցման դեպքում դրանց տերերը կսկսեն բարձրացնել գները: Գների բարձրացմանը մակրոգեներացիաները արձագանքում են տարբեր կերպ: Հին մակրոգեներացիաները, քանի որ իրենց ապրանքների նկատմամբ պահանջարկը կայուն է և նույնիսկ կրճատվում է, չեն կարող բարձրացնել սեփական

[10] Տե՛ս **Маевский В.,** Введение в эволюционную макроэкономику, изд. ,,Япония сегодня”, М., 1997, էջ 51:
[11] Նույն տեղում:

արտադրության ապրանքների գները: Այդ իսկ պատճառով գների աճը հանգեցնում է հին մակրոգեներացիաների արտադրության եկամտաբերության նվազման: Վերջիններս իրենց հերթին փորձում են ինչ-որ ձևով խուսափել ռեսուրսների գների աճից, օրինակ՝ ջանում են խնայողաբար օգտագործել դրանք, բարձրացնում են աշխատանքի ինտենսիվությունը, կատարելագործում՝ արտադրության կազմակերպումը: Հին մակրոգեներացիայի այն ,նորարարներըե, որոնց հաջողվում է դա անել, պահպանում են եկամտաբերության նախկին մակարդակը, նրանց ֆինանսական դրությունը չի վատանում: Իսկ մյուսները, մոտենալով սնանկացման եզրին, ստիպված դադարեցնում են արտադրությունը: Այդ մասի կողմից օգտագործվող հումքը, էներգիան և աշխատանքային ռեսուրսներն ազատվում են: Դրանք կարող է օգտագործել նոր մակրոգեներացիան:

Իր հերթին՝ երիտասարդ մակրոգեներացիան պատրաստ է օգտագործելու իրեն անհրաժեշտ ազատված ռեսուրսները: Այդ պատրաստակամությունը որոշվում է մի շարք հանգամանքներով.

1. Ի տարբերություն հին մակրոգեներացիայի՝ նորի արտադրանքի նկատմամբ պահանջարկն ունի աճի հնարավորություններ:

2. Նորամուծական ապրանքների գները նոր են ձևավորվում, և նոր մակրոգեներացիայի նորարարները օգտվում են այդ իրավիճակից: Նրանք գները սահմանում են այնպես, որ ծածկեն ռեսուրսների ձեռքբերման նպատակով կատարված ծախսերը՝ միաժամանակ ապահովելով բարձր եկամտաբերություն:

Այսպիսով՝ հին մակրոգեներացիայի կողմից օգտագործվող ռեսուրսների մի մասի վերաբաշխումը՝ հօգուտ երիտասարդ մակրոգեներացիայի, տեղի է ունենում դրանց գների աճի հաշվին: Ըստ Շումպետերի՝ „...շրջանառությունից արտադրության միջոցների դուրսբերումը տեղի է ունենում առևտրային վարկի միջոցով. ըստ այդմ՝ նա, ով ցանկանում է իրացնել նոր հնարավորություններ, արտադրության միջոցների շուկայում վճարում է ավելի բարձր գին, քան տվյալ շրջադարձը ապահովող արտադրողը, ով

զրկվում է ռեսուրսների այդ առանձնացված մասիցե[12]:

Սակայն պետք է նկատել, որ ռեսուրսների վերաբաշխումը ակնթարթային գործընթաց չէ: Որքան էլ որ կատարյալ լինի շուկայական տնտեսությունը, այդուհանդերձ, հարկ է սկզբում ռեսուրսները վերցնել հին մակրոգեներացիաներից, օրինակ՝ ազատել աշխատուժի մի մասը, նվազեցնել հումքի և էներգիայի հոսքը: Այդպիսով, ռեսուրսների ընտրության և նոր մակրոգեներացիայի ապրանքների արտադրման միջև առաջանում է ժամանակային լագ: Այս հանգամանքը ևս, ըստ էվոլյուցիոն տեսաբանների, հանգեցնում է երկրի տնտեսության համախառն ներքին արդյունքի անկման: Այսպիսով՝ գործարարության պարբերաշրջանի անկման փուլը ենթադրում է ռեսուրսների գների աճ ու դրանց վերաբաշխում հօգուտ նոր մակրոգեներացիաների:

Շարունակելով դատողությունների վերը նկարագրված ընթացքը՝ կարելի է պնդել, որ ճգնաժամի հաղթահարման ու ՀՆԱ աճի փուլը սկսվում է այն ժամանակ, երբ նոր մակրոգեներացիայի ստեղծած ապրանքների ծավալը գերազանցում է շուկայից դուրս մղվող հին մակրոգեներացիայի արտադրած ապրանքների ծավալը: Ընդ որում՝ հետզհետե աճում է նոր մակրոգեներացիայի արտադրանքի նկատմամբ պահանջարկը: Այս պայմաններում երիտասարդ մակրոգեներացիան կարող է ընդլայնել սեփական կարողությունները, իսկ դա նշանակում է, որ նախկինի պես մտնում է հումքի, էներգիայի և աշխատուժի շուկաներ՝ իր զարգացման համար հավելյալ ռեսուրսներ գնելու նպատակով: Ժամանակի ընթացքում նոր

[12] **Шумпетер Й.,** Теория экономического развития. М., 2008, с. 165.

մակրոգեներացիայի կողմից արտադրվող նորամուծական ապրանքների եկամտաբերության նորման կայունանում է, իսկ հետագայում՝ ընդլայնված արտադրությունը նոր մակրոգեներացիայի նորարարների համար դառնում է պակաս շահավետ։ Համապատասխանաբար, ռեսուրսների վերաբաշխման պատճառով մակրոգեներացիաների միջև պայքարը թուլանում է։ Այս դեպքում ռեսուրսների գներն իջնում են։ Ստեղծվում է մի իրավիճակ, երբ նոր մակրոգեներացիան ստիպված է լինում դադարեցնել իր արտադրության ընդլայնումը։ Այդ պահից սկսած՝ տվյալ ,նորե մակրոգեներացիան դառնում է ,հինե ու սկսում իր նախկին ախոյանների պես դրսևորել պահպանողական վարքագիծ։ Այս պայմաններում նորարարների ի հայտ գալը կարող է վերստին հարուցել ՀՆԱ անկման (ճգնաժամի) փուլ։

Այսպիսով՝ հետևությունը մեկն է. նոր տեխնոլոգիական մակրոգեներացիայի ակտիվ զարգացման ժամանակահատվածում սահմանափակ ռեսուրսների գների աճը՝ հօգուտ նորարարների, դրանց վերաբաշխման գլխավոր մեխանիզմն է։ Այդ մեխանիզմը դադարում է գործել նոր մակրոգեներացիայի զարգացման կանգ առնելու պարագայում։ Փաստորեն, ինֆլյացիայի պատճառներից կարելի է համարել տեխնոլոգիական մակրոգեներացիաների առաջացումն ու ծավալումը։ Ինֆլյացիայի այս տեսակի առաջացումը տեսաբանների ստվար մասը կապում է էվոլյուցիոն գործընթացների, մասնավորապես՝ տեխնոլոգիական մակրոգեներացիաների գոյության ու դրանց միջև առկա մրցակցության հետ[13]։ Այս, այսպես կոչված, էվոլյուցիոն ինֆլյացիան տարեկան կարող է կազմել 5-6 տոկոս, որը, ըստ այդ տեսության, պետք չէ ճնշել։ Հակառակ պարագայում չի բացառվում տնտեսական աճի, տնտեսության մեջ գիտատեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացի դանդաղումը և տնտեսության մրցունակության անկումը։

[13] Տե՛ս **Маевский В.,** նշվ. աշխ., էջ 55։